

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև տեխնիկական համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարությունը, ելնելով Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության միջև առկա բարեկամական հարաբերություններից,

նկատի ունենալով իրենց պետությունների և ժողովուրդների տնտեսական և սոցիալական առաջընթացին նպաստելու ընդհանուր ձգտումը,

կամենալով ամրապնդել առկա կապերը գործընկերային տեխնիկական համագործակցության միջոցով,

պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

### Հոդված 1

1) Կողմերը համագործակցում են ի շահ իրենց ժողովուրդների տնտեսական և սոցիալական առաջընթացի:

2) Սույն Համաձայնագիրը շարադրում է Կողմերի միջև տեխնիկական համագործակցության հիմնական պայմանները: Կողմերը կարող են լրացուցիչ համաձայնագրեր կնքել տեխնիկական համագործակցության առանձին նախագծերի վերաբերյալ (այսուհետ՝ նախագծերի վերաբերյալ համաձայնագրեր): Ընդ որում Կողմերից յուրաքանչյուրը ստանձնում է իր երկրում իրականացվող նախագծերի պատասխանատվությունը: Նախագծերի վերաբերյալ համաձայնագրերում շարադրվում է տվյալ նախագծի համար համատեղ մշակված հայեցակարգը, մասնավորապես՝ նախագծի նպատակը, Կողմերի հանձնառությունները, մասնակիցների խնդիրները և կազմակերպական կարգավիճակը, ինչպես նաև նախագծի իրականացման տևողությունը:

### Հոդված 2

1) Նախագծերի վերաբերյալ համաձայնագրերով Պերմանիայի Ղաշնային Հանրապետության կառավարության կողմից աջակցություն կարող է նախատեսվել հետևյալ բնագավառներում.

ա) Հայաստանի Հանրապետության կրթական, խորհրդատվական և հետազոտական հաստատությունների աջակցություն,

բ) ծրագրերի մշակման, ուսումնասիրությունների և փորձաքննությունների անցկացման աջակցություն,

գ) աջակցություն համագործակցության այլ ոլորտներում, որի վերաբերյալ համաձայնության են գալիս կողմերը:

2) Աջակցությունը կարող է իրագործվել ստորև բերվող եղանակներով.

ա) մասնագետների՝ հրահանգիչների, խորհրդականների, խորհրդատուների, փորձագետների, գիտական և տեխնիկական անձնակազմի, նախագծի ընթերականների և օժանդակ ուժերի գործուղում, այսուհետ՝ Պերմանիայի Ղաշնային Հանրապետության կառավարության հանձնարարությամբ գործուղված ողջ աշխատակազմի միասնական անվանումը՝ գործուղված մասնագետներ,

բ) նյութերի և սարքավորումների (այսուհետ՝ նյութեր) առաքում,

գ) հայ մասնագետների, ղեկավար աշխատողների, գիտնականների ուսուցման և վերապատրաստման միջոցառումներ Հայաստանի Հանրապետությունում, Պերմանիայի Ղաշնային Հանրապետությունում կամ այլ երկրներում,

դ) համապատասխան այլ եղանակներով:

3) Պերմանիայի Ղաշնային Հանրապետության կառավարությունն իր կողմից խրախուսվող նախագծերի իրականացման դեպքում ստանձնում է հետևյալ պարտավորությունները, եթե նախագծերի վերաբերյալ համաձայնագրերն այլ պայմանավորվածություն չեն նախատեսում.

ա) գործուղված մասնագետների աշխատանքի վարձատրությունը,

բ) գործուղված մասնագետների և նրանց ընտանիքների անդամների տեղավորման ծախսերը, եթե գործուղված մասնագետներն իրենք չեն կրում այդ ծախսերը,

գ) գործուղված մասնագետների գործուղման ծախսերը Հայաստանի տարածքում և արտերկրում,

դ) սույն հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետում հիշատակված նյութերի մատակարարումը,

ե) սույն հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետում հիշատակված նյութերը մինչև ծրագրի իրականացման վայր տեղափոխման և

ապահովագրման ծախսերը, բացառությամբ 3-րդ հոդվածի 2-րդ կետում հիշատակված վճարումների և պահեստավորման համար գանձվող տուրքերի,

զ) հայ մասնագետների, ղեկավար աշխատողների և գիտնականների մասնագիտական վերապատրաստման և կատարելագործման միջոցառումների ծախսերը՝ համաձայն սույնի վերաբերյալ Պերմանիայում գործող ղեկավար ցուցումներին:

4) Եթե նախագծերի վերաբերյալ համաձայնագրերով այլ պայմաններ չեն նախատեսված, ապա Պերմանիայի Ղաշնային Հանրապետության կառավարության հանձնարարությամբ նախագծի իրականացման նպատակով առաքվող նյութերը Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու պահից անցնում են Հայաստանի Հանրապետությանն ի սեփականություն: Առաջադրված խնդիրների կատարման նպատակով հիշյալ նյութերը տրամադրվում են խրախուսվող ծրագրերին և գործուղված մասնագետներին առանց սահմանափակումների:

5) Պերմանիայի Ղաշնային Հանրապետության կառավարությունը հայտնում է Հայաստանի Հանրապետության կառավարությանը, թե որ կազմակերպություններին կամ հաստատություններին է հանձնարարում տվյալ նախագծի աջակցության միջոցառումների իրականացումը: Լիազորված իրականացնողները, կազմակերպությունները կամ հաստատությունները այսուհետ կանվանվեն «իրականացնող ատյան»:

### Հոդված 3

Հայաստանի Հանրապետության կառավարությունը նախագծերի իրականացման ընթացքում ստանձնում է հետևյալ հանձնառությունները.

1) Հայաստանում գործող օրենսդրության հիման վրա Հայաստանի Հանրապետությունում իրականացվող նախագծերին իր միջոցներով տրամադրում է անհրաժեշտ հողամասեր և շինություններ, ներառյալ վերջիններիս սարքավորումը, եթե սարքավորումն իր միջոցներով չի առաքում Պերմանիայի Ղաշնային Հանրապետության կառավարությունը:

Մանրամասները կկարգավորվեն տեխնիկական համագործակցության առանձին նախագծերի վերաբերյալ կնքվելիք համաձայնագրերով:

2) Ազատում է Պերմանիայի Ղաշնային Հանրապետության կառավարության հանձնարարությամբ նախագծերի իրականացման նպատակով ներկրվող նյութերը լիցենզավորման, օդակայանի կողմից գանձվող, ներմուծման, արտահանման և այլ պետական

վճարումներից, ինչպես նաև պահեստավորման տուրքերից և երաշխավորում է, որ առաքված նյութերն անհապաղ կապամաքսավորվեն:

3) Հոգում է նախագծերի, ինչպես նաև 2-րդ հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետի համաձայն ներկրվող նյութերի շահագործման և տեխնիկական սպասարկման ծախսերը:

4) Իր միջոցներով տրամադրում է տվյալ նախագծի կենսագործման համար պահանջվող մասնագետներ և օժանդակ աշխատուժ: Նախագծերի վերաբերյալ համաձայնագրերում այդ նպատակով սահմանվում է ժամանակացույց:

5) Հոգում է, որ գործուղված մասնագետներին առաջադրված խնդիրների կատարումն ըստ կարելիվույն սեղմ ժամկետում ստանձնեն հայ մասնագետները: Եթե տվյալ համաձայնագրի շրջանակում նախատեսված է հայ մասնագետների մասնագիտական վերապատրաստման կամ կատարելագործման միջոցառումներ անցկացնել Հայաստանի Հանրապետությունում, Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում կամ այլ երկրներում, ապա Երևանում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանության մասնակցությամբ կամ դեսպանության կողմից առաջադրված մասնագետների թվից վերապատրաստման և կատարելագործման նպատակով ներկայացնում է բավարար թվով հայ մասնագետների թեկնածություններ: ՀՀ կառավարությունը ներկայացնում է միայն այն հավակնորդներին, ովքեր հանձն են առնում վերապատրաստվելուց կամ կատարելագործվելուց հետո առնվազն հինգ տարի աշխատել տվյալ ծրագրի համար, և հոգում է որակավորում ստացած հայ մասնագետների համապատասխան վարձատրության մասին:

6) Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ ձանաչում է ավարտական վկայականները, որոնք տրվում են հայ մասնագետներին սույն Համաձայնագրի շրջանակում վերապատրաստման կամ կատարելագործման միջոցառումներին մասնակցելուց հետո՝ ըստ նրանց ստացած մասնագիտական որակավորման, և հիշյալ անձանց ընձեռում է ստացած կրթությանը համապատասխանող աշխատատեղեր զբաղեցնելու և ծառայության մեջ առաջադիմելու կամ ծառայողական աստիճանակարգով բարձրանալու հնարավորություն:

7) Առաջադրված խնդիրներն իրականացնելու ընթացքում գործուղված մասնագետներին ցուցաբերում է ամենայն աջակցություն և տրամադրում նրանց անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը:

8) Երաշխավորում է նախագծերի իրականացման համար ստանձնած հանձնառությունների կատարումը, եթե, ըստ նախագծերի վերաբերյալ համաձայնագրերի, այդ հանձնառությունները չի ստանձնել Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարությունը:

9) Ապահովում է Հայաստանի Հանրապետությունում ծրագրերի իրականացմամբ զբաղվող բոլոր ատյանների ժամանակին և մանրամասն իրազեկումը նախագծի բովանդակությամբ:

#### Հոդված 4

1) Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարությունը պարտավորեցնում է գործուղված մասնագետներին.

ա) ողջ ուժերով, իրենց աշխատանքի վերաբերյալ ձեռք բերված համաձայնության շրջանակներում նպաստել Համաձայնագրով սահմանված նպատակների կենսագործմանը,

բ) չմիջամտել Հայաստանի Հանրապետության ներքին գործերին,

գ) պահպանել Հայաստանի Հանրապետության օրենքները և հարգել երկրի բարքերն ու սովորույթները,

դ) հանձնարարված աշխատանքային բնագավառից դուրս տնտեսական այլ գործունեություն չձավալել,

ե) վստահաբար համագործակցել Հայաստանի Հանրապետության պաշտոնական ատյանների հետ:

2) Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարությունը մինչև մասնագետի գործուղումը ստանում է տվյալ մասնագետին ընդունելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության համաձայնությունը: Իրականացնող ատյանը, ներկայացնելով մասնագետի կենսագրությունը, խնդրում է Հայաստանի Հանրապետության կառավարությանը իր կողմից ընտրված մասնագետի գործուղմանը համաձայնություն տալ: Եթե երկու ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությունից մերժում չի ստացվում, ապա այդ դիտարկվում է որպես համաձայնություն:

3) Եթե Հայաստանի Հանրապետության կառավարությունը ցանկանում է, որ գործուղված մասնագետը հետ կանչվի, ապա նախապես կապ է հաստատում Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության հետ և ներկայացնում է իր ցանկության պատճառները: Եթե Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարությունն է ցանկանում հետ կանչել գերմանական կողմից գործուղված մասնագետին, ապա նույն

կերպ հոգում է այն մասին, որ Հայաստանի Հանրապետության կառավարությանն այդ մասին տեղեկացվի հնարավորին չափ շուտ:

## Հոդված 5

1) Հայաստանի Հանրապետության կառավարությունը երաշխավորում է գործուղված մասնագետների և նրանց ընտանիքների անդամների անձի և ունեցվածքի պաշտպանությունը, այդ թվում՝ մասնավորապես՝

ա) Հայաստանի Հանրապետության կառավարությունը երաշխավորություն է ստանձնում գործուղված մասնագետների կողմից սույն Համաձայնագրով հանձնարարված խնդիրների կատարման ընթացքում պատճառած վնասների դեպքում: Սույնով բացառվում է գործուղված մասնագետներին վնասի հատուցման պահանջի ներկայացումը: Հայաստանի Հանրապետության կողմից գործուղված մասնագետներին փոխհատուցման պահանջ, որպիսին էլ լինի վերջինիս իրավական հիմքը, կարող է ներկայացվել միմիայն կանխամտածված կամ կոպիտ անփութության հետևանքով առաջացած վնասների պարագայում:

բ) Երաշխավորում է, որ 1-ին նախադասության մեջ հիշատակված անձինք ենթակա չեն ձերբակալման կամ կալանքի՝ սույն Համաձայնագրով նրանց հանձնարարված խնդիրներից մեկի կատարման ընթացքում կատարած գործողությունների կամ բացթողումների, այդ թվում՝ բանավոր կամ գրավոր արտահայտությունների համար:

գ) Ապահովում է 1-ին նախադասության մեջ հիշատակված անձանց անարգել ելումուտը երկիր ցանկացած ժամանակ:

դ) 1-ին նախադասության մեջ հիշատակված անձանց տալիս է վկայական, որը թույլ է տալիս, ելնելով Համաձայնագրի դրույթներից, վայելել Հայաստանի Հանրապետության կառավարության հատուկ պաշտպանությունը և աջակցությունը:

2) Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝

ա) չի գանձում հարկեր և պետական այլ տուրքեր Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջոցներից գործուղված մասնագետներին սույն Համաձայնագրի շրջանակում կատարած աշխատանքի դիմաց վճարած վարձատրություններից: Հարկերից և տուրքերից ազատումը տարածվում է նաև Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության հանձնարարությամբ սույն Համաձայնագրի

շրջանակում օժանդակ միջոցառումների իրականացման համար ֆիրմաներին վճարվող վարձատրությունների վրա:

բ) 1-ին պարբերության 1-ին նախադասության մեջ հիշատակված անձանց թույլատրում է իրենց կացության ընթացքում առանց հարկեր գանձելու և երաշխավորություններ պահանջելու ներկրել և արտահանել անձնական օգտագործման նշանակության իրեր, այդ թվում՝ յուրաքանչյուր ընտանիքի համար մեկական ավտոմեքենա: Առանց հարկեր գանձելու և երաշխավորություններ պահանջելու ներկրման և արտահանման թույլտվությունը տարածվում է նաև ոչ գործածական դարձած կամ կորստի ենթարկված իրերի փոխարեն նորերը ներկրելու և արտահանելու վրա:

գ) 1-ին կետի 1-ին նախադասության մեջ հիշատակված անձանց թույլատրում է Հայաստան ներկրել դեղորայք, սննդամթերք, խմիչք և սպառողական այլ ապրանքներ՝ անձնական սպառման պահանջների բավարարման սահմաններում:

դ) 1-ին կետի 1-ին նախադասության մեջ հիշատակված անձանց առանց տուրքեր գանձելու և երաշխավորումներ պահանջելու տրամադրում է վիզաներ, ինչպես նաև աշխատանքի և կացության արտոնագրեր:

## Հոդված 6

Սույն Համաձայնագիրը տարածվում է նաև այն ուժի մեջ մտնելու պահին Պայմանավորվող կողմերի կողմից իրականացվող տեխնիկական համագործակցության արդեն գործող նախագծերի վրա:

## Հոդված 7

1) Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում այն օրվանից, երբ երկու երկրների կառավարությունները միմյանց ծանուցում են, որ ավարտված է ուժ ստանալու համար օրենքով սահմանված ներպետական ընթացակարգը: Ուժ ստանալու օրվա հաշվարկման համար հիմք է ընդունվում վերջին ծանուցման ստացման օրը:

2) Սույն Համաձայնագրի վավերականության ժամկետը հինգ տարի է:

Այնուհետև ամեն տարի լուռ համաձայնությամբ Համաձայնագրի վավերականության ժամկետը կերկարաձգվի ևս մեկ տարով, եթե Կողմերից մեկը վավերականության ժամկետը լրանալուց երեք ամիս առաջ գրավոր չի ծանուցի այն դադարեցնելու մասին:

3) Սույն Համաձայնագրի դրույթները Համաձայնագրի վավերականության ժամկետը լրանալուց հետո շարունակում են գործել տեխնիկական համագործակցության շրջանակներում իրականացվող ընթացիկ այլ նախագծերի համար:

Կատարված է Երևան քաղաքում 1998 թվականի հունիսի 27-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և գերմաներեն, ընդ որում երկու տեքստերն էլ համագոր են:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1999 թվականի հունիսի 28-ից: